Ռուզան Միրզոյանի ելույթի տեքստը

Այսօր, իհարկե, այստեղ ենք տխուր առիթով, սակայն այդ տխրության մեջ շատ մեծ լույս կա, քանի որ այս աննախադեպ իրադարձության արդյունքում Աիդա Մարդանյանը համալսարանի համար հավերժ է դառնում: Շնորհակալություն բոլոր այն մարդկանց, ովքեր հղացել են այս գաղափարն ու իրականացրել:

Սիրելի Անահիտը քիչ առաջ բարձրաձայնեց այն արդյունքները, որ բոլորիս համար շատ սիրելի ու թանկագին Աիդա Մարդանյանը, ով իր ողջ գիտակցական կյանքում ինքնամոռաց կերպով նվիրվել է ֆրանսերեն լեզվի ուսուցման գործին և հանդիսացել է ֆրանկոֆոնիայի ջահակիրը Իջևանի շրջանում արժանացել է, ավելին վաստակել է: Փորձենք այդ բոլոր նվաճումների ետևում տեսնել սիրելի կնոջ ու մարդու տեսակը, ինչի շնորհիվ արժանացել է զանազան պարգևների, մրցանակների, կապերի հաստատման, մեծագույն հարգանքի ու սիրո իջևանյան հանրության և ոչ միայն, կողմից:

Աիդա Մարդանյանը շռայլորեն օժտված էր անչափ դրական հատկանիշներով, որոնցից մի քանիսը կցանկանայի առանձնացնել՝

1. մարդկանց անշահախնդրորեն սիրելու, օժանդակելու կարողություն, որի ապացույցն է իր սաների մեծ բանակը Իջևանում և նրա սահմաններից դուրս,
2. անսահման պարտաճանաչություն, պատասխանատվություն, հարգանք իր աշխատանքի և գործընկերների հանդեպ,
3. մշտական ձգտում բացահայտելու գիտելիքի նոր հորիզոններ, համեստություն:

Այս ցանկը կարող է ձեզանից յուրաքանչյուրը մտովի բազմապատկել, եռապատկել:

Իմ խորին համոզմամբ՝ Աիդա Մարդանյանը ուսուցչի, կնոջ, մոր, ընկերոջ իսկական օրինակ է:

Անչափ ցավալի է նրա կորուստը: Մեր ամբիոնում նրա աթոռը արտաքուստ դատարկ է և ոչ մեկիս մտքով չի անցնում այն զբաղեցնել, քանի որ պահպանում ենք նրա ներկայությունն առարկայորեն ինչպես նաև մեր մտքերում, սրտերում ու արարքներում:

Ցանկանում եմ խոսքս ավարտել ֆրանսիացի անվանի բանաստեղծ Շառլ Պեգիի «Մահը ոչինչ է» հրաշալի բանաստեղծությամբ, որն ասես իր և նրան սիրող, գնահատող մարդկանց համար գրված լինի:

Aujourd'hui, bien sûr, nous sommes ici dans une triste occasion, mais il y a une grande lumière dans cette tristesse, car à la suite de cet événement sans précédent, Aida Mardanyan devient éternelle pour l'université. Merci à toutes les personnes qui ont eu cette idée et qui ont permis de la concrétiser.

Notre chère Anahite vient d'annoncer les résultats selon lesquels Aida Mardanyan, qui nous est très chère et chère à tous, qui s'est consacrée à l'enseignement de la langue française et a été la porteuse du flambeau de la francophonie dans la région d'Idjevan, a gagné davantage. Essayons de voir derrière toutes ces réalisations le type d'une femme et d'une personne chère, grâce à laquelle elle a reçu divers prix, récompenses, établissement de liens, le plus grand respect et amour de la communauté d'Idjevan et pas seulement.

Aida Mardanyan était dotée de qualités extrêmement positives, dont je voudrais souligner quelques-unes :

1. la capacité d'aimer et de soutenir les gens de manière désintéressée, dont la preuve est la grande armée de ses étudiants à Idjevan et au-delà,
2. devoir infini, responsabilité, respect de son travail et de ses collègues,
3. effort constant pour découvrir de nouveaux horizons de connaissance, sa modestie. Chacun de vous peut mentalement multiplier et tripler cette liste.

Dans ma profonde conviction, Aida Mardanyan est un véritable exemple d’enseignante, d’épouse, de mère et d’amie.

Sa perte est extrêmement triste. Sa place dans notre chaire est extérieurement vide, et personne ne pense à la remplir, parce que nous maintenons sa présence matériellement ainsi que dans nos pensées, nos cœurs et nos actions.

Je voudrais terminer mon discours avec le merveilleux poème "La mort n'est rien" du célèbre poète français Charles Pegi, qui semble avoir été écrit pour lui et pour les gens qui l'aiment et l'apprécient.